




ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

ՅԵՐՈՒՆ-ԽՐԱՍԳԻՐ

ԶԱՐԾԱՅՐ ԴԱՀԱՆԱՅ ԿԵՂԵՐԵԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 28 ՕԳՈՍՏՈՍ 1910

ԹԻԻ 22

“ՏԱՃԱՐ,” Ի

ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոլսոյ համար տարեկան	35 դրուք
Գաւառաց համար տարեկան	40 »
Արտասահմանի համար տարեկան	10 Ֆրանկ
Ձեռքէ կը ծախուի պրակը	40 փարա

Բաժանորդագրները կանխիկ են

«ՏԱՃԱՐ»-ի թէ վարչական և թէ՛ խմբագրական գործերուն համար պէտք է դիմել առ
Զարմայր Բահանայ Կեղիւրեան, Կ. Պոլիս, Պեչիքաւ, Հայոց Եկեղեցի

درسماعده بشکطاشده ارمی کلیسائده (داجار) غزتی می مدیری پاپاس زارمار

Rev. Père Zarmaïr Guézurian, Rédacteur de la Revue «DADJAR»
Constantinople, Béchiktache Eglise Arménienne

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՋՈՒՄԱՆ

Զարմաթըըլար, Յակոբեան խան

ԽՄԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

1. Տ. Գնէլ Մ. Վրդ. Գալէմբարեան
2. Տ. Տիրայր Մ. Վրդ. Մարգարեան
3. Տ. Ղեւոնդ Մ. Վրդ. Դուրեան
4. Տ. Սուրէն Վրդ. Գալէմբարեան
5. Տ. Հմայեակ Բնյ. Էջմէրճեան
6. Տ. Արիստակէս Բնյ. Հիսարլեան
7. Տ. Զարմայր Բնյ. Կէղլեւեան

ՎԱՐՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ


1. Տ. Ղեւոնդ Մ. Վրդ. Դուրեան
2. Տ. Հմայեակ Բնյ. Էջմէրճեան
3. Տ. Խորէն Բնյ. Յարութիւնեան
4. Տ. Սուրբաս Բնյ. Դալրճեան
5. Տ. Դոդոս Բնյ. Պէյազնիւն
6. Տ. Խորէն Բնյ. Վարդանեան
7. Տ. Գէորգ Բնյ. Անանեան
8. Տ. Գրիգոր Բնյ. Ճէպէճեան

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԲ

«ՏԱՃԱՐ» ԿՐՕՆԱԹԵՐԹԻ

ԱՂԻՐԱՆՈՒՊՈՒԹՅՈՒՆ.—Առաջն. Փոխանորդ Տ. Արսէն Բնյ. Դերձակեան
ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒՆ.—Տ. Ռուբէն Բնյ. Գա-
բիկեան
ԱՄԵՐԻԿԱ.—Առաջն. Փոխանորդ Տ. Գո-
ղոս Վրդ. Դափթանեան
ԱՅԵԹԱՊ.—Տ. Գարեգին Բնյ. Դոդարեան
ԱՅԻՐՆ. ԳԱՐԱՀԻՍՍԱՐ.—Տ. Խաչատուր
Ա. Բնյ. Տօնէլեան
ԲԱՐԵՐԴ.—Մ. Սանտեան էֆ.
ԳԱՂԱՏԻԱ.—Առաջնորդ Տ. Բաբգէն Մ.
Վրդ. Կիւլէսէրեան
ԳԱՀԻՐԷ.—Առաջնորդ Տ. Մկրտիչ Մ.
Վրդ. Աղանուշի
ԵՂԵՍԻԱ.—Բ. Թիւրքեան էֆ.
ԵՕՁՂԱՏ.—Առաջնորդ Տ. Խորէն Մ. Վրդ.
Դիմաքսեան
ԵՐՁՆԿԱ.—Առաջնորդ Տ. Երուանդ Վրդ.
Փէրտանճեան
ՋՄԻԻՆԻԱ.—Տ. Յարութիւն Բնյ. Տ.
Սարգիսեան
ԷՍԿԻՇԷՀԻՐ.—Տ. Գալուստ Բնյ. Տ.
Գալուստեան
ԽԱՐԲԵՐԴ.—Առաջն. Տեղապահ Տ. Գէորգ
Մ. Վրդ. Ասլանեան
ԿԱՐԻՆ.—Առաջնորդ Տ. Սմբատ Մ. Վրդ.
Սաատէթեան
ԿԻՐԱՍՈՆ.—Մաթոս էֆ. Թոքատլեան
ԿԻԻՄԻԻԼՃԻՆԷ.—Տ. Ներսէս Բնյ. Նշան-
եան
ՀԱԼԷՊ.—Առաջն. Տեղապահ Տ. Շահէ
Վրդ. Գապարեան
ՄԱՆՉԷՍԹԸՐ.—Առաջնորդ Տ. Գէորգ Ս.
Եպիսկ. Իւթիւճեան
ՄԱՐԱՇ.—Տ. Հմայեակ Բնյ. Վարժա-
պետեան
ՄԱՐՁՈՒԱՆ.—Յակոբ էֆ. Սրապեան
ՆԻԿՈՄԻԴԻԱ.—Տ. Ոսկի Բնյ. Պիպիեան

ՆՈՐ ՋՈՒՂԱ.—Առաջն. Փոխանորդ Տ.
Բաղարատ Վրդ. Վարդապետեան
Շ. ԳԱՐԱՀԻՍՍԱՐ.—Տ. Նաթան Բնյ.
Տաւեան
ՈՒՇԱՔ.—Կարապետ էֆ. Բէնեան
ՊԱՆՏՐՄԱ.—ՊԱԼԷՔԷՍԻՐ.—Առաջնորդ Տ.
Կարապետ Մ. Վրդ. Մազլումեան
ՊԱՂՏԱՏ.—Առաջնորդ Տ. Մովսէս Ս.
Եպիսկ. Կէօմրիւքեան
ՊԱՅՐԱ.—Կարապետ էֆ. Բէրթմէնեան
ՊԱՐՏԻՉԱԿ.—Յովհաննէս էֆ. Տ. Կա-
րապետեան
ՊԵՐՈՒԹ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Եղե-
կիւլ Վրդ.
ՊՐՈՒՍԱ.—Առաջնորդ Տ. Յովհաննէս Ս.
Եպիսկ. Արշարունի
ՌՈՒՍՃՈՒԲ.—Տ. Մկրտիչ Բնյ. Մըր-
նիկեան
ՌՈՏՏԱԹՕ.—Առաջն. Փոխանորդ Տ. Բար-
թոլ Ա. Բնյ. Թազմճեան
ՍԱՄՍՈՆ.—Առաջնորդ Տ. Սահակ Մ. Վ.
Օտապալեան
ՍԵՐԱՍՏԻԱ.—Առաջն. Փոխանորդ Տ.
Թէոփիլէ Բնյ. Օտապալեան
ՍԵԼԱՆԻԿ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Կարա-
պետ Բնյ. Թուրմանեան
ՍՕՖԻԱ.—Տ. Մեսրոպ Բնյ. Տ. Մհարպա-
եան
ՏԱՐՏԱՆԷԼ.—Տ. Դիոնիսիոս Բնյ. Տրէզ-
եան
ՏԷՏԷ-ԱՂԱՃ.—Տ. Գարեգին Բնյ. Տէօլ-
լէթեան
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ.—Դաւիթ էֆ. Մովսէս-
եան
ՏԻՄԷԹՕԳԱ.—Տ. Գէորգ Բնյ. Թէրզեան
ՏՓՂԻՍ.—Հ. Առաքելեան
ՓԱՐԻՉ.—Հոգեւոր Տեսուչ Տ. Վառդա-
պետ Բնյ. Բիպարեան
ՔԷՍՍԹԷՆՃԷ.—Տ. Մատթէոս Բնյ. Մա-
նիկեան
ՔՂԻ.—Առաջն. Տեղապահ Տ. Պսակ Վրդ.
ՖԻԼԻՊԷ.—Տ. Տաճատ Բնյ. Դերձակեան
ՖԲԷՉՆՕ.—Յակոբ էֆ. Նշկեան



ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ

ՇԱԲԱԹ, 28 ՕԴՈՍՏՈՍ 1910

ԹԻԻ 22

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ. — Վերանորոգուիլն Հայ Եկեղեցւոյ, ՎԱՐԴԱՆ ՔԶ. ԱՍԼԱՆԵԱՆ. — ԿՐՕՆԱ. **ՊԱՅՄԱՆԱԿԱՆ.** Ստեփանոս Սիւնեցի (շար.) ԵՂԻՇԷ Վ. ԽԱՅԵՐԵԱՆ. — Օմար Խալիֆայի Քրիստոնէից շնորհած հրովարտակը, ԲԱԲԳԷՆ Մ. Վ. — ՍՄՈՒՑՈՒՄԱՆ ԷՋԵՐ, Կոյրի մը հառայանքը. — Նուազ յերկոտսասներորդ սաղմոսն, ԱԶԱՋՈՒՐԿ ՅԱԴԵՈՍ ԿԵՕԶԻՐԵԱՆ. — Հապա ժողովուրդին ժախը, ԳՐ. Զ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ. — Դժբաղդ հանճարի մը շիջումը, ՇԱԽԱՐԵ Վ. — ԱԶԳԱՅԻՆ ԿԵՍԱՆԻԲԸ, Կրթական խնդիրներ, շարժումն լուրեր եւ ժողովոց որոշումներ:

ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՉՈՐՐՈՐԴ ՅՕԴՈՒԱՄ

Ժամանկութիւն Հայ Եկեղեցւոյ կամ
ԲՅՈՒՆԵՐԻՆ Ժամագրքին

Հայաստանեայց Եկեղեցւոյ հասարակաց աղօթից կարգաւորութիւնը կը բովանդակի Ժամագրքին մէջ, որ մեր եկեղեցական գիրքերու մէջ առաջիններէն է:

Ժամագրքի խորագրէն կը տեսնենք թէ կարգաւորուած է անիկայ Սահակ Մեարոպ սրբազան Թարգմանիչներու ձեռամբ, և ապա Գիւտ և Յովհան Մանգալուսի հայրապետներէն ճոխանալէ վերջը, Ներսէս Դ. Շնորհալի հայրապետի օրով իր վերջնական հանգամանքը ստացած է: Ուրիշ գրքերու մէջ՝ ուրեմն՝ ձեւացեր է մեր Ժամագրքը՝ հետեւապէս կրնանք դիմել ըն-

տիր և հին ձեւագրերու, և Շնորհալիի դարէն առջին ներմուծուած բոլոր յաւելուածները ջնջել: Իսկ ուրիշ գրքերու մէջ եղած խմբագրութիւններու վրան ալ՝ Բանին և Ս. Գրքի լոյսով նկատելով՝ պատշաճ սրբագրութիւններու ձեռնարկելու իրաւունքը միշտ ունինք կը կարծեմ: Համագրային ժողովը ձեռնհաս կը սեպեմ այդ կարգի փափաքելի սրբագրութիւններու, նկատելով որ անցեալին մէջ պատահեր են ժամանակներ, յորս շարականներու անհարկի բազմութիւններէ նեղուելով, Եկեղեցին գումարեր է իր Ս. Սիւնհոգոսները, և յապաւեր է քմահաճոյքով ներմուծուած շարականները: Ուստի և չեմ կարծեր թէ գտնուին ընդդիմախօսներ, որ այս ճիւղին մէջ Ս. Ժողովին ձեռնհասութեանը դէմ առարկին և ընդդիմաբանեն:

Մեր քննութիւններուն գալով, միշտ պէտք է գիտնալ թէ՛ մանք երկիւղածօրէն մեզի վրայ դրուած պարտականութիւնը կատարելու փափաքողներէն ենք, ուստի

հրա կողմանք կարծիքներ ներկայացնել այսօր գործածութեան մէջ գտնուող ժամագիրքին վրայ, հեռի ենք ա՛յն գաղափարէն թէ մեր բոլոր կարծիքները անպատճառ ընդունելի են: Խօսուած, գրուած գաղափարներու ամփոփումն է զոր գասաւորելու ջանք մը միայն ունեցած ենք, և մեր աշխատութեան նպատակն այն է սոսկ որ Հայաստանիայց Ս. Եկեղեցիի փառքը գամ մի ևս պայծառանայ. այդ նուիրական նպատակին կը ձգտէի և միշտ պիտի ձգտիմ:

Ա.

Մանր դիտողութիւններու ենթարկելէ առաջ Եկեղեցիի բոլոր արարողութիւնները, հարկ կը տեսնեմ ճշտել թէ ժողովուրդին կամքը ո՞ր սկզբունքին կ'ուղէ հետեւի:

Դարուս ոգին ի՞նչ կը պահանջէ.

Եկեղեցիի արարողութիւններուն յաւերձնը կը փափաքի ժողովուրդը թէ յապաւումը:

Կը յուսամ թէ առանց առարկութեան լուծուած կարելի է սեպել այդ երկու սկզբունքներէն յապաւումն սկզբունքին ընդունուելու պարագան:

Ուստի և վերանորոգութեան ճամբան պիտի ըլլայ յապաւումն վերստին և ոչ յաւերձնական վերստին:

Անհարկի յաւելումներ և անպատշաճ յապաւումներ կան հիմակ հայ եկեղեցիներու մէջ:

Յապաւումն համար աւելորդ չեմ սեպեր սա անէքտօթը.—1889ի Բարիզի Արուեստահանդէսը այցելելու նպատակով Մարտիկա կը գտնուէի, և ինծի հետ էր Տէր Գալուստ քահանայ թիբեաքեան: Կիրակի առաւօտ էր. օտար երկրի մէջ փափաքեցանք երկուքս ալ Հայ մատուռը երթալ և աղօթել. գացինք և ուղեցինք դպրութիւն ընել. այն ատենի Մարտիկայի երէցն էր Տէր Սահակ մը: Սկսեց ժամերգութիւնը առանց «Հայր մեր»ի, և չիտկէ չիտակ «Առաւօտ լուսոյ» երգէն՝ անցաւ «Նորաստեղծեալ» երգին, և ապա առանց միջանկեալ ո՞ր և ի՞նչ մաղթանքի. չիտակ ձայն տուաւ «Սորհուրդ խորին» երգին, և Պա-

տարագի արարողութիւնը սկսուած եղաւ ժամերգութեան հետ միասին: Երկուքս ալ շատ հետաքրքրուեցանք յապաւումն այսքան անլուր եղանակի մասին. բայց ինչ որ ցաւ պատճառեց զլիսաւորաբար ինծի՝ սա էր.—Ճաշու Գիրքը կարդացի, և ո՞րքան հնար է ջանացի յատակ կարդալ, և լաւ առողջանութեամբ արտասանել մարգարէական և առաքելական հատուածները, ու միտքէս կ'անցնէի թէ քահանայէն անշուշտ շնորհակալութիւն մը պիտի լսէի: Պատարագի աւարտումէն վերջը քահանան զիս յանդիմանեց թէ «ան ի՞նչ երկան բաներ էր որ կարդացիր»: Հող մեր խիղճը վրդովուեցաւ, և հասկցայ թէ որքան կամայականութեանց կրնան եղեր ենթարկուիլ մեր ժամերգութիւնները, և ի՞նչ կարգի քահանաներ կրնանք ունենալ, որոնք կը ձանձրանան եղեր Սուրբ Գրքի ընթերցումէն:

Յապաւումն մարտիկական այդ օրինակին քով կրնանք ներկայացնել գաւառի տէրտէրի օրինակ մը, որ երբ կը կարդացուի Նիկիական հանգանակէ վերջը «Իսկ որք ասեն էր երբեմն յորժամ ոչ էր որդին կամ էր երբեմն յորժամ ոչ էր Ս. Հոգին կամ թէ յոչէից եղին կամ յալմէ էուկենէ ասն լինել զորդին Աստուծոյ և կամ զՍուրբ Հոգին...»: առանց թողելու որ սարկաւազը լրացնէ խօսքը և նշովքը արտասանէ, անմիջապէս կը սկսի «Իսկ միք փառաւորեացուք» մաղթանքը:

Ու դեռ ի՞նչ տարօրինակ յապաւումներու հանդիպած ենք գաւառական շատ մը եկեղեցիներու մէջ մեր երբեմնական պըտոյտներու միջոցին: Բոլոր յապաւումները կամայական են, առանց մեթոտի մը կամ սկզբունքի մը: Ու միթէ յաւելումները մեթոտով են կամ պաշտպանելի սկզբունքով մը.— Ո՛հ, ո՛հ, Բոլոր յաւելումները քաղքէ քաղաք, եկեղեցիէ եկեղեցի կը տարբերին, թէ և յաւելումներու կեդրոնական աղբիւր Կ. Պոլիսն է, և գաւառը հետեւած է անոր: Օտար մը հրա ժամագիրքը ձեռքը ուղէ հետեւիլ Հայ Եկեղեցիի ժամերգութեանց, շատ տարբերութիւններ պիտի տեսնէ սպեալ առաջնորդող գրքին:

և կատարուող արարողութիւններուն մէջ : Կամայականութիւնը ծայրէ ծայր կը տեւէ զարդիս բոլոր Հայ եկեղեցիներու մէջ և յաւելմանց տեսակէտով : Նորին Ս . Օծու-
թիւն Վեհ . Հայրապետը երբ կը յայտարարէր թէ այժմէն իսկ կարելի է փոքր փո-
փոխումներ ներմուծել Եկեղեցիին մէջ , մենք պիտի համարձակէինք առաջարկել
թէ այժմէն հրատարակել հարկ է սա բանա-
ձեւը . «Մինչև ցգումարումն Ս . Սիւնհոգո-
սին , հրատարակուած էջմիածնի Ժամագիր-
քին հետեղութեամբ պէտք է տպա-
գրուին Ժամագիրքները , և անոր սահմանած
կարգադրութենէն զուրս ամէն յաւելում-
ներ և յապաւումներ դադարուած են :»
Այս յայտարարութիւնով , նախ թէ՛ Երու-
սաղէմի և թէ՛ Կ . Պոլսի տպարանները լա-
ւագոյն օրինակին հետեւած կ'ըլլային Ժա-
մագրքի տպագրութեան միջոցին , և Ժամա-
գիրքէ Ժամագիրք տարրերութեանց ան-
տեղութիւնը կը վերցուէր , և երկրորդ՝ ա-
նիմաստ յաւելումներով արդէն իսկ երկար
Ժամերգութիւնները չէին խճողուեր , և ան-
լուր ու անտեղի յապաւումներով անճանա-
չելի չէր դառնար եկեղեցւոյ Ժամերգու-
թիւնը : Մեր նախնիք ո՛րքան երկրւղածօրէն
կը շարժէին Եկեղեցիի սրբազան հոգերգու-
թեանց խնդիրներու մէջ , և մենք վերջին
դարերուս մէջ որքան անտարբեր դիրք
բռնած ենք այդպիսի նուիրական պարա-
զաներու առջև :

Բ.

Կը բանանք Ժամագիրքը և անոր ըս-
կիզբը կը տեսնենք արձանագրուած «Հրա-
ժարումն» խորագիրը և անոր ներքեւ «Հրա-
ժարիմք» հատուածը , որ թուի թէ հին
երդմնեցուցիչներու պարագայէն Ժառանգ
մնացած է Եկեղեցիին . և որուն ներքեւ
նօտք գրիով հրահանգը կ'ըսէ . «Երեք ան-
գամ կրկնէ ձեռքերդ դարձար բռնելով :»
Կրկնումները՝ ահա՛ արդի ըմբռնումնե-
րուն հակասող խոշոր պարագան , զոր ու-
շադրութիւն առնելու է , և ամէն անգամ
որ ստիպիչ կարեւորութիւն չունի , կրկնումը
յապաւելու է , որ Ժամերգութեանց ո՛չ
ոգւոյն և ո՛չ ալ տառին կը հակասէ , ըսյց

որ կ'օգնէ Ժամերգութեանց համառօտուե-
լուն : Չեմ տեսած և չեմ կարծեր որ ամէն
եկեղեցիի մէջ Ժամերգութիւնները ճիշտ
այդ հատուածէն սկսին :

«Հրաժարիմք» հատուածէն անմիջապէս
վերջ կը սկսի Հայաստանեայց առաքելա-
կան ուղղափառ Եկեղեցիի դաւանագիրը ,
որ կը սկսի «Ոստովանիմք և հաւատամք»
բառերով :

Կ'առաջարկեմ որ

1 . Նիկիական հանգանակին հետ փոփոխ
ընթերցումի դրութեամբ աւելի ծանօթա-
ցուի անիկայ ժողովուրդին , փոխանակ պատ-
ուելու ձեով ենթարկելու զայն ա՛յն անորոշ
դրութեան ուր հիմակ մնացեր է , և քահա-
նային ու Ժամկոչին ներկայութեանը մինակ
կը կարգացուի , ա՛ն աչ եթէ քարեհաճին
կարդայ :

2 . Պէտք է Եկեղեցին բացատրէ զայն
ինչպէս որ հասկցած է , նոյնին հրատարակ-
ման օրէն մինչև ցարդ բոլոր երանայնորհ
Նախնիքներու նշանաւոր գործերէն քաղ-
ուածի մը ընկերացումով , որպէս զի Եկե-
ղեցիի պաշտօնեաներ կատարեալ տեղեակ
ըլլան ուղղափառ վարդապետութեան :

3 . Պէտք է օտար լեզուներով իլուր
աշխարհի հռչակենք զայն , որպէս զի օտար
Եկեղեցիներ պէտք չտեսնեն փնտառուքներ
ընելու , և ճշտել ջանալու թէ մեր Եկեղե-
ցին իբրև միաբնակ ի՞նչ կերպ կը վարդա-
պետէ կամ կը բանաձեւէ իր սկզբունքները :

4 . Պէտք է Եկեղեցին իր դաւանագրին
իրբև բացատրական յաւելուած՝ հանդիսա-
պէս հռչակէ իր ամէն օրուան կարգացած
մաղթանքը . «Յարեւելից մինչև յարեւ-
մուտս ընդ ամենայն տեղիս քրիստոնէու-
թեան ո՛ւր և կարդան զանուն տեառն
սրբութեամբ , Տէր աղօթիւք նոցա և բարե-
խօսութեամբ մեզ ողորմացի» : Ատով մենք
յայտարարած կ'ըլլանք բոլոր քրիստոնեայ
աշխարհին թէ Հայ Եկեղեցին իր դաւա-
նագրէն ստորակէտ մը չփոխելով հանդերձ ,
յարդած է ցարդ և յայսմեան ալ պիտի
յարգէ ու մեծարէ աշխարհի վրայ գրա-
նուած բոլոր քրիստոնեայ Եկեղեցիներու
տարբեր ըմբռնումները . չի նզովեր ո՛չ մէկ
Եկեղեցի , զանոնք սուրբ կը սեպէ և ա-

նոնց աղօթքը պէտք կը սեպէ։ Արդէն իսկ Եկեղեցիի արարողութեան մէջ գտնուած մի միակ նշովքը՝ Հայ Եկեղեցիի յօրինածը չէ, հապա Նիկիոյ Ժողովին սահմանումն է։ Ուրիշ Եկեղեցիներէ այս կէտին մէջ կը տարբերի Հայ Եկեղեցին, և ստիկայ կը կազմէ զինքը բնորոշող պարծանքի գիծերէն մէկը։

Չոր օրինակ՝ Հռոմէական Եկեղեցին պէտք է տեսնել իր դաւանադրին մէջ գրել «Հոգին Սուրբ բղխի ի հօրէ և յորդուոյ» և ո՛վ որ այդպէս չընդունիր, կը բանադրէ։ Յոյն Օրթոտոքս Եկեղեցին կ'ըսէ «Հոգին Սուրբ բղխի ի հօրէ», և յատկապէս կը բանադրէ Հռոմէական Եկեղեցին, վասն զի «և յորդուոյ» յաւելուածը ներմուծեր է իր Հաւատամքին մէջ։ Հայոց Եկեղեցին կ'ըսէ «Հոգին Սուրբ բղխի ի հօրէ և աւանու յորդուոյ», առանց Յոյնին պէս նշանակելու Հռոմէական Եկեղեցին, կամ Հռոմէականին պէս Յոյնին Եկեղեցին։

Երրորդ հատուածին մէջ ըսինք թէ օտար Եկեղեցիներու վնասողութիւն տեղի տալու չենք, հապա օտար լեզուով մեր Նախնիքներու մաքուր հաւատքը ծանուցանելու ենք բոլոր քրիստոնեայ աշխարհին. դայս ըսելով չուզեցի ակնարկել թէ Յոյն Եկեղեցիին հետ մի քննարկում բառին համար ունեցած դարաւոր վէճերնիս նորէն արծարծել սկսելու ենք, ոչ ալ Ունիթոններու սարքած 117 տեսակ մոլորութիւններու ցանկերը հերքել կ'ակնարկեմ. այդ ցուցակները մեր Եկեղեցիին ճակատին նետուեցան և զորս հերքելու համար դեռ մինչև Տէրայնց պատուելին «Իրաւախօս»ներու հրատարակման օրերը սիրտ մաշեցուցին մեր նախնիք, և հաստատել ճգնեցան Լատին աղբիւրէ բխած ամբաստանութեանց հանդէպ մեր Եկեղեցիին ուղղափառութիւնը։ Ո՛չ, այդ չէր մեր գիտումը. այլ Հայ Եկեղեցիին իսկապէս համակիր Անկլիքան Եկեղեցիի և կամ չէզոք աստուածաբաններու փափաքին կ'ակնարկէի, որոնք կ'ուզէին տեղեկանալ հեղինակօրէն տրուած լուսաբանութիւններով՝ մեր Եկեղեցիին իսկական մտածումները, Վերջին տարիներս էր դեռ որ անկլիքան երէց մը՝ Վեր. Տաուլինկ՝ յատուկ

ուսումնասիրութիւն մը կը հրատարակէր Հայ Եկեղեցիին մի քննարկում բառին ինչ տեսակէտներով որդեգրած ըլլալուն մասին։ Արդ, ինչո՞ւ մուծը մնայ մեր Եկեղեցիին վարդապետութիւնը և թշնամիներու յերկրանքներէն ստիպունք քաղել իրենց հմտութիւնը Եւրոպայի զիտնական աստուածաբանները։

Վ.Ա.ԲԻՍ.Ն. ԲՃ. Ա.ՍԼ.Ս.ՆԵՍ.Ն.

(Շարունակելի)

ԿՐՕՆԱ-ՊԱՏՄԱԿԱՆ

ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻՆԵՑԻ

(Շար. ճախորդ թիւ 6)

Մեր գրութեան ընթացքին մէջ, կամ մաւոր զանցառութեամբ մը չխօսեցանք Ստեփանոսի մեկնութեանց և թարգմանութեանց արժէքին վերաբերմամբ. որովհետեւ ի բաց առեալ թարգմանութիւնները՝ մեկնութեանց գրութեան ժամանակին մասին կարծիքներ կը տարբերին. ոմանք Ստեփանոսի Դուռայ կաթողիկոսարանը եղած ատեն գրած կը համարին զանոնք, ոմանք ալ Սիւնեաց վարդապետարանը գտնուած միջոցին. յայտնի չէ նմանապէս թէ Ստեփանոս դեռ Բիւզանդիոն չգացած գրեց իր շարականները թէ յետ դարձին Բիւզանդիոնէն. յուստի հոս խորոշ անունին ներքեւ պիտի ամփոփենք մեր ըսելիքները Ստեփանոսի թէ՛ շարականներուն, թէ մեկնութեանց և թէ թարգմանութիւններուն վերաբերութեամբ. —

ՍԻՆԵՑԻ՝ ԻՐԲՆԻ ԳԵՐԹՈՂ

Իր շարականները, իր մեկնութիւնները և թարգմանութիւնները

Ինչպէս Սիւնեաց դպրոցի ներկայացուցիչներէն շատեր, նոյնպէս և Ստեփանոս կոչուած է ԳԵՐԹՈՂ։ Այս անունը կ'ըմբռնէին Նախնիք երեք տարբեր իմաստներով. առաջին՝ իրրեւ բանաստեղծ, երկրորդ՝ իրրեւ քերական, երրորդ՝ իրրեւ

մեկնիչ⁽¹⁾։ Ստեփանոս այս բառին իրականացումը երեք խմացումներովն ալ ցոյց տուած է իր անձին վրայ։ Քերթող եղած է իր բանաստեղծական երգերովը. քերթող եղած է քերականական գրութիւններովը, քերթող եղած է Ս. Դրբի վերաբերեալ գրուածներու յօդուածովը կամ թարգմանութեամբը։ Ասոնց մէջէ առաջինն և վերջինին վրայ միայն պիտի խօսինք, որովհետեւ քերականական գրուածքէն բան մը չունինք ձեռքերնիս⁽²⁾։

Ստեփանոսի ընծայուած շարականներն են աւագ օրհնութիւնները, բացի վառ ձայնէն⁽³⁾ որուն երգողը եղած է Շնորհալի։ Ոմանք ուրիշ Ստեփանոսի մը կը վերագրեն այդ շարականները, ցոյց այդ անհաւանական է, որովհետեւ Օրբէլեանի խօսքերն ալ «բաժանեաց և զուրթ ձայնն», և կարգեաց շարեաց շարականն՝ զյարութեան օրհնութիւնն» կը հաստատեն թէ այս Ստե-

փանոսն է հեղինակը այդ շարականներուն։

Ստեփանոս այս շարականներուն մէջ կը փայլի իր բանաստեղծական հանճարովը. զրէթէ ամէն տող ունի իր յատկութիւնն ու պայծառութիւնը։ Ստեփանոս սահուն կերպով կը պատկերացնէ իր գաղափարները երբ կը խօսի Քրիստոսի խաչելութեան, չարչարանաց և յարութեան պարգաններուն վրայ, և բովանդակ մարդկութեան համար՝ որ անկեալ վիճակ մը ունի, Քրիստոսի օգնութիւնը կը հայցէ։ ԶՔրիստոս կը դաւանի յոյսը և յարութիւնը մարդկային ազգին, և իբրեւ միակ ապուէն՝ Անոր կը զրկէ բոլոր հոգիները, որպէսզի իրենց հիւանդութեան բժշկութիւնը գտնեն։

Մերթ ընդ մերթ կը խառնէ նաև Աստուածաշունչի պատմութիւնէն պարագաներ՝ զորս գիտէ բնական և հրապուրիչ եղանակով մը ներկայացնել, ինչպէս է զոր օրինակ Փարաւոնի Կարմիր ծով ընկնելու պարագան. «Փարաւոն հանդերձ կառօն ընկզմեցաւ ի հոսանս ջուրց և որդիքն Իսրայէլի գնացին ընդ ցամաքն ի մէջ ծովուն»։ Այսպէս եօթը տեսակ եղանակներու վրայ գրուած այս շարականները սուրբ զգացումներով և վառ երեւակայութեամբ հիւսուած արձակ բանաստեղծութիւններ են ամէն ալ, և միեւնոյն ատեն փայլուն նշանները Ստեփանոսի բարեպաշտ և հաւատացեալ հոգիին։

* Ստեփանոսի մեկնողական գրուածներուն մէջ ամէնէն նշանաւորներն են՝ Արարածոց, Յորայ, Դանիէլի և Եզեկիէլի մարգարէութեանց մեկնութիւնները։ Միայն վերջինէն քանի մը հատուածներ անկորուստ մնացած են։ Կայ նաև Դանիէլի մեկնութիւնէն հատուած մը⁽¹⁾ որ պարզ և յստակ ոճով շարագրուած ըլլալուն կրնայ նշանակութեան արժանի գրուածք մը նշկատուիլ։

* Ստեփանոս նշանաւոր եղած է նաև իբրեւ թարգմանիչ։ Սիւրենցիք իրենց համար առանձնաշնորհ մը նկատած էին թարգմանութիւնը և մեկնութիւնը Ս. Դր-

(1) Արահամ կարողիկոս առ Կիւրիոն գրած բողոքի մէջ (Դիրք Թղթոց, էջ 165) կ'ըսէ. «Կամեցալ եպիսկոպոսունս արձակել առ սրբութիւն մեր և զհաւաքս զբոց սրբոց». միեւնոյն ժամանակ գրեթէ՝ Սմբատ մարգպան եւս առ նոյն Կիւրիոն կը գրէ. «Կամես եպիսկոպոսունս հաւնդերձ փերդողօք արձակել». (նոյն էջ 169). պարզ համեմատութիւն մը ցոյց կուտայ թէ փերդող բառը ի միջի այլոց, Ս. Դրոց հմուտ եղողի կամ մեկնիչ նշանակութիւնն ալ ունէր։

(2) Յովնանէս Երզնկացի՝ որ մեկնութիւն մը գրած է՝ Դիոնէսիոս Թրակացիի փրականութիւն՝ կ'ըսէ, թէ առաջին անգամ Փ. Մագիստրոս եղած է այդ փրականին մեկնութեան ձեռնարկողը. բայց նոյն փրականութեան մէկ գրչագրին մէջ յաճախ յիշատակուած օտէօ եւ մօսոյս անունները ցոյց կուտան թէ աւելի հնութիւն մ'ունի այն, եւ հաւանական է կարծել թէ Մովսէս Սիւնեցիին եւ Ստեփանոս Սիւնեցիին եղած ըլլան այդ անունները։

Ինչպէս ըսինք՝ ձեռագրի պահպանութեան պատճառով դժուար պիտի ըլլայ անոր տրժեքի մասին բան մը խօսիլ. միայն սա կ'ըսենք որ՝ այդ տեսակ ձեռնարկ մը որ նպատակ ունէր նիւթական մամուլներով բոլորովին ձուլել հայ լեզուն յունարեկի համեմատ, երբ չեղաւ բոլորովին անօգուտ աշխատութիւններէն մին՝ գեթ չկրցաւ հիմնաւոր օգուտ մ'ընծայել լեզուին։

(3) Թէ Աւագ օրհնութեանց վառ մայրը (գկ) երգած է Շնորհալի վկայ է Կիրակոս պատմիչ. «Բանգի նորս է յարութեան օրհնութիւնն երրորդ կողմն» (Կիրակոս, էջ 68)։

(1) Եթէ շփոթուած չէ այն՝ անվանէր գրուածքի մը հետ որ Մեթոքիոսի կ'ընծայուի։

րոց, իբրեւ թէ Սահակ և Մեսրոպ միայն իրենց կտակած ըլլային այդ ճիւղը (Օրբէլեան, հտր. Ա. Գլ. Է. էջ 67)։ Եւ ինքզինքնին միշտ ճարտար թարգմանիչներ նկատելով կ'արհամարէին զնախնիս, «անգէտ» կոչելով զանոնք իրենց արուեստին։

Պէտք չէ մոռնալ սակայն թէ այն օրէն՝ երբ յունարէնի ազդեցութիւնը մացուցին անոնք լեզուին մէջ, լեզուն զարմանալի կերպարանափոխութիւններ կրեց, մինչեւ իսկ անհասկնալի ըլլալու չափ. վկայ են այս մասին այն գրութեանքները զորս յօրինած են անոնք յունարէն լեզուն սորվելէն ետքը, մինչդեռ անկէք առաջ՝ լեզուն պահած է միշտ իր պարզութիւնը և զիւրահասկնալի ըլլալու առանձնայատուկ նկարագիրը։

Ստեփանոսի թարգմանութիւններուն

մէջ կարեւորներն են Գրիգոր Նիւսացիի «Յաղագս բնութեան մարդոյ» գիրքը, Ս. Կիւրղի Պարապմանց գիրքը, Դիոնիսիոս Արիսպագացիի գրութեանքը և ուրիշ մէկ մէկ քանի գրութիւններ։ Նիւսացւոյն ընծայուած գրքի, նոյնպէս Կիւրղի Պարապմանց յիշատակարաններէն կ'երևի թէ Ստեփանոս այս գիրքերու թարգմանութեանը ձեռնարկած է Պոլսոյ մէջ գտնուած տտին, գրեթէ 712 թուականին, իրեն աշխատակից ունենալով Դաւիթ հիւպատոսը զոր վերագոյն յիշեցինք։ — Դիտողութեան արժանի է որ բուն այս թուականին՝ արդէն իսկ ֆերթոյ անունը առած էր Ստեփանոս, ինչ որ Պոլիս գալէ առաջ իր ունեցած համբաւին ու գրական գործունէութեանը գրաւական մըն է։

(Շարունակելի)

ԵՂԻՇԷ Վ. ԽԱՅԵՐԵԱՆ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն

ՕՍԱՐ ԽԱԼԻՖԱՅԻ ՔՐԻՍՏՈՆԷԻՑ ՇՆՈՐՀԱԾ ՇՐՈՎԱՐՏԱԿԸ

Դպրեմանոց (Արմաշ) Մասեւադարանին ձեռագիրներու քաժնին մէջ կայ ձեռագիր մը, «Համանոս սկզբունք երկրաչափական աստեղաչափութեան», որուն միակ յիշատակարանը սա է. «Յիշատակ եւ զայս մասեան ուսումնական՝ Պրուսացի Յովհաննէս դպիր Տէր Կարապետեան՝ վարժապետ ի դպրասանն Աստիագարու, ի վայելչ ուսումնաստէր միաբանից փանիցն Արմաշու, յաւի Տեառն 1831 սեպտ. 15»։

Ձեռագիրը ընկիր Լոսրագիր է, միայն «առաջարկութիւն»ները բոլորովին են։ Ձեռագրիս վերջը ճերմակ ձգուած բուրբերու 117րդին եւ 118րդին վրայ ընդօրինակուած են հետեւեալ բարգմանութիւնները Օսար Խալիֆայի հրովարտակին։ Ինչպէս կ'երեւի՝ հրովարտակի բնագրին վրայ չեն եղած բարգմանութիւնները, այլ Այասօփայի մասեւադարանը գտնուած Դուրանի մը մէջ պահուած օրինակին վրայ։ Հայերէն երկու բարգմանութիւններէն առաջինը կ'երեւի թէ փրանսերէն բարգմանութեան մը վրայէն եղած է, իսկ երկրորդը՝ յայտնապէս շափնեւերէնէն։

Մեզ կը բռնի՝ թէ Լոյսիսկ Տէրոյեանցի գրչէն եղած ըղան այս կրկին հայ բարգմանութիւնները, թէեւ ոչ գիրը (շղագիր) Տէրոյեանցիէն է, ոչ ալ ու է յիշատակութիւն կայ այդ մասին։

Իբր պատմական արժեք ունեցող «սփուման» կը հրատարակեմք զայն։

ԲԱՐԴԷՆ ՎՐԴ.

Թարգմանութիւն Կաշնագրի արտաքին բնագործողականի եւ պաշտպանութեանն, զոր շնորհեաց Բրիտանիոյ երուսաղէմի Օմար Խալիֆայ երկրորդ, յաջորդ Մահամմէտի, Հէմիրա 15, եւ հասարակ Թուականին 637:

Յանուն Աստուծոյ ամենաբարեւոյ եւ ամենաողորմածի:

Օրհնեմք զԱստուած՝ որ ամբարձն զմեզ յիսլամութիւն, եւ պատուէ զմեզ ի հաւատաւ, եւ ողորմեցաւ մեզ առաքելով ի մեզ զմարգարէն իւր զՄուհամմէտ: Խաղաղութիւն եւ օրհնութիւն Աստուծոյ եղիցի ի վերայ այնորիկ, որ սրբէ զսիրտս մեր, որ չնորհէ մեզ յաղթութիւն բնորդէմ թշնամեաց մերոց, բնակութեանն ի դաշտավայրս, յաւաքարակս, եւ որ չնչէ ի մեզ սիրելութիւն առ եղբարս, զի օրհնեսցի Աստուած ի ծառայից իւրոց յազապս այսր չնորհի անընթաց ողորմութեանն:

Ահաւասիկ գրութիւն Օմարայ որդւոյ Հաթթապայ՝ որ տուաւ իբրեւ ուխտ, իբրեւ դաշն Սոփրոնիոսի Պատրիարքին՝ որ պատուեալն է ի համօրէն ժողովրդոյ իւրոց: Պատրիարք թագաւորական ուղղափառ աղանդոց, յերուսաղէմ ի վերայ լեւրինն Զիթենեաց:

Այս արտօնագիր բովանդակէ զհպատակս, զեկեղեցականս, զմիայնակեացս եւ զկրօնաւորս եւ չնորհէ նոցա զապահովութիւն յայն տեղիս՝ յորս գտանին:

Մեք ճշմարիտ հաւատացեալքս եւ յաջորդք մեր պարտիմք հաստատել զապահովութիւն քրիստոնեայ հպատակաց՝ եթէ կատարեցին զպարտս հպատակութեանն:

Մի՛ ջնջեսցի այս ուխտ՝ եթէ ոչ առ պակասութեան նոցա ի դիպուածս՝ յորում կամիցին պակասիլ ի հպատակութեանէ եւ ի հնազանդութենէ:

Հաւատարապէս չնորհեսցի այս ապահովութիւն եկեղեցեաց նոցա եւ ազարակաց, տեղեաց ուխտաւորութեան նոցա եթէ ի ներքս եւ եթէ արտաքոյ, այսինքն եկեղեցեաց Քամաւէի (Սր. Գերեզմանին), տեղւոյ ծննդեանն Յիսուսի ի Բեթլէհէմ, մեծի եկեղեցւոյն ի յայրին երեք դրամք հանդերձ, ի հիւսիս, ի հարաւ, եւ յարեւ-

Թարգմանութիւն նորին հրովարտակի բնութիւնականին: Անյայտ հրովարտակ Ռմարայ Խալիֆայի, ի ժե. ամի Հեմիրա (636 Թուականին Բրիտանիոյ):

Յանուն Աստուծոյ ամենաբարեւոյ եւ ամենաողորմածի:

Օրհնեսցուք զԱստուած՝ որ բարձրացոյցն յիսլամութիւն եւ պատուէ զմեզ ի հաւատաւ, եւ գթացաւ ի մեզ առաքելով առ մեզ զՄուհամմէտ զիւր մարգարէ: Զի եւ զիցի ի վերայ այնորիկ խաղաղութիւն եւ օրհնութիւն Աստուծոյ՝ որ սրբէ զսիրտս մեր, որ չնորհէ մեզ յաղթութիւն ի վերայ թշնամեաց մերոց, բնակելոցն յազարակս, եւ որ չնչէ ի մեզ ի վերայ եղբարց մերոց, զի օրհնեսցի Աստուած ի ծառայից իւրոց վասն այս չնորհի անընթաց ողորմութեան:

Ահաւասիկ զիր Ռմարայ որդւոյ Խաթթապայ՝ որ չնորհեցաւ իբրեւ դաշնագիր եւ առանձնաշնորհութիւն Պատրիարքին Զէֆերինոսի մեծարելոյ ի համօրէն ժողովրդոց իւրոց: Պատրիարք արքունի ուղղափառ աղանդոց յերուսաղէմ ի վերայ լեւրինն Զիթենեաց:

Այս դաշնագիր բովանդակէ զհպատակս, զեկեղեցականս, զմիանձնեացս եւ զկրօնաւոր եղբարս եւ չնորհէ զապահովութիւն ի տեղիսն՝ յորս բնակին:

Մեք ճշմարիտ հաւատացեալքս եւ յաջորդք մեր պարտիմք հաստատել զապահովութիւն քրիստոնեայ հպատակաց՝ թէ կատարեցեն զպարտ հպատակութեանն:

Այս արտօնագիր մի՛ ջնջեսցի՝ բայց եթէ ի պակասութեան նոցա (այսինքն) ի դիպուածս յորում սոքա կամիցին զերծանիլ ի հպատակութենէ եւ ի հնազանդութենէ:

Զի չնորհեսցի նմանապէս ապահովութիւն եկեղեցեաց, ազարակաց նոցա, ի տեղիս ուխտաւորութեան նոցա, ի ներքս եւ արտաքոյ, այսինքն յեկեղեցւոյ Քամաւէի (Ս. Գերեզման) ի տեղւոյ ծննդեանն Յիսուսի ի Բեթլէհէմ, ի մեծ յեկեղեցւոյն յայրին երեք դրամք հանդերձ, ի հարաւ, ի հիւսիս եւ յարեւմուտս: Նոյն-

մուտս. նոյնպէս այլոց Բրիտոնէից որք զան յուխտ. զոր օրինակ Ֆուանդը, Վրացիք, Հայք, Խփտիք, Նեստորականք և Յակոբիկք, որ հնազանդք են այսր Պատրիարքի:

Արժանի են ամենայն ակնածութեան. քանզի արդէն յայլ նուազ մեծարեցան հաստատուն վկայագրով կնքելոյ բռամբ կամ թաթիւ ձեռին նորա, որով զմեզ յորդորէ խնայել ի նոսա և շնորհել նոցա ապահովութիւն: Յոյր սակս մեք ճշմարիտ հաւատացեալքս պատրաստ եմք լինել մարդասէր առ նոսա, ի պատիւ այնորիկ որ առ նոսա գտաւ մարդասէր:

Պարտ է զի ազատ իցեն ի հարկէ, ի գլխահարկէ և ի նմին իսկ ի մաքսէ, յամենայն քաղաքս և յամենայն ծովս Մուսուլմանաց, ի մտանել նոցա ի Քաման (այսինքն Ս. Գերեզման), և ցորչափ մնացեն յուխտաւորութեան չէ պարտ պահանջել ինչ ի նոցանէ:

Բրիտոնեայք որք յայց ելանեն սուրբ Գերեզմանին, պարտին ի նպաստ Պատրիարքին մի և կէս տրաքմի սպիտակ արծաթ:

Ճշմարիտ հաւատացեալք երկուց սեռից պարտին հետեւիլ այսր օրինաց (Սուլթանք և գլխաւորք ոչ ի բաց առեալ) և հնազանդիլ, թէ ճոխք իցեն, և թէ աղքատք:

Տուեալ ի ներկայութեան համօրէն աշակերտաց Մարգարէին, Ապտուլահայ, Օսմանայ, Պ. Ա. Ֆանայ, Սայիդայ, Ապտուլահանայ, Իսկի Արիֆայ:

Զի ընծայեցեն հաւատ այսր գրութեան, որ պարտի մնալ ի ձեռս նոցա, զի օրհնութիւն Աստուծոյ շնորհեցի Մարգարէին և աշակերտաց նորա: Օրհնեցուք զԱստուած զթագաւորն աշխարհի, առ որ ապագասն լինիմք որպէս և ի Մարգարէն փաստաբանն մեր: Ի քսան բէպիւղէվէլի, ի հնգետասան ամին հէճիրայ:

Որ ընթեւնու զայս գիր, և որ իւրք զընդդէմն գործիցէ, յօրէ յայսմանէ մինչեւ յօրն վերջին դատաստանի, հատցէ զդաշնն Աստուծոյ, և բարեկամին նորա Մարգարէին:

պէս այլոց Բրիտոնէից որ գտանին ի սեղիս իւրեանց, Վրաց, Հապէշաց, Նեստորականաց, Յակոբիկեանց և այնոցիկ ամենեցուն՝ որ վերաբերին առ այս մարգարէ:

Արժանի են ամենայն յարգանաց, զի արդէն յայլ տնգամ մեծարեցան ի մարգարէն հաստատուն վկայագրով կարգադրելոյ իւրով կնքով. որով զմեզ յորդորէ խնայել ի նոսա և շնորհել նոցա զազատութիւն: Յայր սակս մեք ճշմարիտ հաւատացեալք պատրաստ եմք ի բարեյօժարութիւն առ նոսա, ի պատիւ այնորիկ որ բարեյօժար գտաւ առ նոսա:

Պարտին ազատ լինել ի հարկէ, ի գլխահարկէ և ի բաժէ յամենայն քաղաքս և յամենայն ծովեղերեայս մուսուլմանաց ի մուտս նոցա ի Քաման, այսինքն ի Ս. Գերեզման, և ի մնայեալ ժամանակս ուխտաւորութեան նոցա մի՛ ինչ առցի երբեք ի նոցանէ:

Բրիտոնեայք որ յայց ելանեն Ս. Գերեզմանին, պարտին տալ վասն Պարտիարքին մի և կէս տրաքմի սպիտակ արծաթ:

Ճշմարիտ հաւատացեալք երկուց սեռից պարտին հետեւիլ այսր օրինաց, (ոչ ի բաց առեալ զթագաւորս և զգլխաւորս) և հնազանդիլ եթէ ճոխք իցեն և եթէ աղքատք:

Տուեալ ի ներկայութեան ամենայն աշակերտաց մարգարէին Ապտուլահայ, Օսմանայ, Պ. Ա. Ֆանայ, Սաաւայ, Ապտորահանայ, Իսկի Ասաֆ: Ի 20 բէպուէլէլէլ, ԺՆ. յգի ամին Հէճիրայ:

Ի Կոստանդնուպոլիս, ի գրաստն Սրբառն Սոփիա, ի մէջ այլոց արաքացի, պարսիկ և թուրք ձեռագիր մատենից գտանի և Ղուբան մի գրեալ գօթի տառիւք, և ի հասարակաց մատենադարանին կառուցելոյ ի Սուլդան Ապղիւլ Սմիդայ ի մէջ այլոց ձեռագրաց Ղուբան մի գրեալ ի ձեռն առաջին իսալիֆայից, այսինքն յՈմարայ, յՕսմանայ և յԱլեայ, գրեալ արաքացի տառիւք, յորում գտանի և այս արածնագիր, զոր շնորհեաց յՈմար խալիֆայ Սօփրոնիոսի Պատրիարքին Նրուսաղէմի, յորմէ թարգմանեցաւ ի գաղղիական քարբառ:

ՄՈՌՑՈՒԱԾ ԷԶԵՐ

Ողբացեալ աշագործի Պատուելիին մահը սյժմեռութիւն կուտայ մօտ խան ծառի առաջ Արեւելի շաքաթական գրական յանդուածին մէջ հրատարակած «Խաւարոյ» մէկ տպանշտին, որուն մէջ կը յայտնուի իր «Խերքերու յատկանշական եղանակը, ու կը ցոյցանայ՝ մանաւանդ՝ իր նկարագրին ուղագրաւ մէկ կողմը, յամառ աշխատասիրութիւնը, այդ կողմը եւ ամեն վայրկեան ուրիշին օժանդակութեան կարօտ վիճակին մէջ։—

ԿՈՅՐԻ ՄԸ ՀԱՌԱԶԱՆՔԸ

Տըխուր է հոգիս :

Ամէն կողմըս մութ , խաւար կը դանհմ .
Աչքերս ալ չունիմ , որ շուրջըս յաճեմ :
Աստղերն ինձ մարած , ճրագն ինձ լոյս չը տար ,

Եւ արեւուն լոյսն իսկ ինձ է խաւար :
Ամէն մարդ ուրախ , ամէն սիրտ է չէն ,
Բերկրութիւն ունին արարածք ամէն .
Չըքոտի ճճեակն ալ ինձ չէ նրման ,
Նա եւրս ունի բերկրութեան վայրկեան :
Ես միայն , ես միշտ կ'ողբամ առանձին ,
Սուգ արտառք միայն ինձ եղան բաժին :
Մինչև ցե՛րք այսպէս միայնակ մընամ ,
Մինչև ցե՛րք օրն ի բուն քընանամ ,
Մինչ ցե՛րք գիշերներն ես մընամ արթուն ,
Մինչ ցե՛րք անվաստակ տանջուիմ անքուն :
Անգործ ու թափուր մաշեմ զիմ հոգի .
Լըսէ ինձ , Աստուած , կեանքս կը ցամքի :
Ցաւ եւ հեծութիւն բաժին է հիգիս ,
Մի , մա՛րդիկ , ի դուր մի՛ ըսփոփէք զիս ,
Տըխուր է հոգիս :

Տըխուր է հոգիս :

Եւ է՛ր չը տիրիմ , մինչ ես եմ միայն
Յաշխատութեան բիւր բարեաց ձեռնու-
նայն ,

Մինչ ես եմ միայն որ գիտելով չափ
Թէ աշխատութիւնն է միակ անխոր
Եւ միշտ խոսամոնապա՛ն բարերար բարի ,
Որ զիւր անձնատուր չը տար բնաւ չարի ,
Դեռ զուրկ կը մընամ աշխատութիւնէ ,
Անգործ կը մաշիմ , միթէ այս կեանք է :
Չըքոտի ճճեակն իսկ բաժնիկ մ'ունի ,



ԱԶԱՋՈՒՐԿ ԹԱՂԵՈՍ ՊԱՏՈՒԵԼԻ ԿԷԶԻՐԵԱՆ

Իւր աշխատութեան ձեռքէն կ'ընդունի
Իւր հանապազորդ անհրաժեշտ պարէն
Իւր մշտավաստակ ջանից փոխարէն ,
Որք նեկտար կ'ընեն անոր խըմած ջուր
Եւ ամբրոսիա անոր կերակուր :
Ես մշտավաստակ իմ ջանից զաւակ ,
Որ զաշխատութեան անուշակ ճաշակ ,
Առի անդատին ի մատաղ տիւր ,
Անգործ կը հեծեմ զուրկ ի վաստակոց .
Ոչ ոք կը լըսէ զիմ լալահառաջ
Զիմ կիսահագագ նըւաղեալ աւաջ .
Ոչ ոք կը համարի հիգիս ի թիկունս ,
Բաղդն իր խաղալիք բրաւ զիս նըկունս ,
Անգործութեամբ բիւր չարիք հեղան յիս ,
Զիք ոք որ լըսէ ձայնի իմ հիգիս :

Տըխուր է հոգիս :

Տըխուր է հոգիս

Քանզի երբ միտքս կուտամ իմ խոկմանց ,
Եւ երբ կը յիշեմ թէ ի սէր ուսմանց ,
Ինչե՛ր եմ զոհեր ինչե՛ր քաշեր եմ ,
Որչա՛փ անձկութեամբք հոգիս մաշեր եմ ,
Երբ զատնք յիշեմ , ո՛հ , կ'ուշաթափիմ ,
Մտաց մթութեան մէջ կը խարխալիմ .
Երբ վերջս խորհիմ , հոգ զիս կը պատէ .
Եւ վհատութիւն կամբքս կը ջլատէ .
Անգործ կեանքը զիս կ'ընէ յուսահատ ,

Խօսիլ կուտայ ինձ խօսքեր ապիրատ .
 Յայնժամ սրտաբեկ, Աստուած իմ, կ'ըսեմ,
 Միթէ ունայէտ էր այն մարտըն վրսեմ,
 Զոր կը մըղէի ես հէգըս միայն
 Անթիւ դիմադրաց դէմ միանգամայն :
 Առ ի՞նչ, յայս աշխարհ առ ի՞նչ եկայ, Տէր,
 Է՞ր վառեցիր յիս զաշխատութեան աէր :
 Այն օր յորում մարդ գործելէ դադարի,
 Լաւ չըլլա՞ր թէ այլ եւրս նա չապրի,
 Ո՞չ ապաքէն քեւ ներշնչուած ըսաւ
 Փողըն տարսնեան, այր մեծահամբաւ,
 Թէ նա որ չունի գործել եւ ջանալ
 Իրաւունք չունի, նա թող չուտէ ալ :
 Զասոնք գիտելով՝ ահա եղկելիս
 Զեմ ուղեր երբեք մըխիթարել զիս,

Տըխուր է հոգիս :

Ոկիւստ, 1891

X

Կը փութանք հրատարակել հանգուցեալին անհիպ
 մէկ տասնաւորն ալ, գրաբար, գաղափար մը
 տալու համար թէ ո՞րքան ծիրացած էր ան
 Սանկաներու եւ Մեսրոպներու ոսկեղինիկ
 յեզուին :

ՆՈՒԱԳ ՅԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՍԱՂՄՈՍԵ

Մինչեւ յե՞րր, Տէ՛ր իմ հոգեսէր, մոռանայցես զիս
 իսպառ,
 եւ մինչեւ յե՞րր զարծուցանես զերեսս քո զուար-
 Թարար:
 Մինչեւ յե՞րր, Տէ՛ր, երկնեւ յողոք, ուխտ սին,
 անգոր, 'ւանկատար,
 եւ մինչեւ յե՞րր ցուր չարակտիտոր զոգիս տան-
 ջին չարայար:
 Մինչեւ ցե՞րր, Տէ՛ր, իմ Թշնամին զիս կոխոտէ
 խրոխտարար,
 Նայեա եւ լուր ինձ, Աստուած իմ, հոգեոյս միակ
 մըխիթար:
 Լոյս լաւ արչաց հոգւոյ հիքիս, զօրինաց քոց լոյս
 պայծառ,
 Զի մի՛ երբեք անմահ մահուն քան զիս առցէ
 վայրուպար:
 Մի՛ սասացէ ցիս Թշնամին. վա՛շ, վա՛շ կաւոյդ,
 դու անկար,
 եւ մի՛ նեղիչք իմ ցնծացեն, եւ է կալցի զիս
 իսաւար:
 Յողորմութիւն քո յուսացայ, եւ ցնծացաւ սիրտ
 իմ յար,
 Ի փրկութիւն քո խրախուսեալ, զքեզ օրհնեցից
 քարերար:

ԱԶԱԶՈՒՐԿ

ԹԱԿԷՈՍ ԿԷԶՈՒՐՈՍԱՆ

ՀԱՊԱ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԶԱՅՆԸ

Իւրաքանչիւր ճշմարիտ ազգասէր ու
 կրօնասէր Հայ անհատ մեծապէս ուրախ կը
 զգայ ինքզինքը, թէ Հայ Եկեղեցիի վերա-
 նորոգումը կամ բարեկարգութիւնը օրուան
 խնդիր մըն է այսօր, եւ աւելի բանաւոր ու
 բաղձալի լուծում մը ստանալու յոյսեր կը
 ներշնչէ: Այս խնդիր մըն է որուն գոհա-
 ցուցիչ լուծումը ոչ միայն միզի, Հայերուս,
 այլ նոյն իսկ հայասէր ու անկեղծ օտա-
 րազի քրիստոնեաներու եւ Հայոց բարե-
 կամներուն ալ գոհունակութիւն պիտի
 պատճառէ, եւ անգամ մըն ալ հանդիսաւոր
 քապէս պիտի երեւան հանէ Հայ Եկեղեցիին
 պատմական եւ պատուական ոգին, որ հա-
 կառակ աննպաստ պարագաներու եւ պատ-
 մական սազնապալից չըջանալու, կրցած
 է պահել իր իսկութիւնը առաւել կամ
 նուազ պայծառութիւնով:

Բայց այս կարի կենսական խնդիրին
 մէջ շատ կարեւոր ու անտեսուած կէտ մըն
 ալ կայ, զոր պիտի ուզէի այս առիթով
 ուշադրութեանը յանձնել ամէն անոնց,
 որոնք անկեղծօրէն կը շահագրգռուին այս
 հարցով եւ անոր յաջող լուծումին կը սպա-
 անն ակնկառոյց: Այդ ալ այս գործին մէջ
 ժողովուրդին ձայնը, աշխարհականներու
 մասնակցութիւնն ու բաժինն է: Արդէն այս
 մասին թեթեւ ակնարկութիւն մը ըրած էր
 Խարրերդէն Արժ. Տ. Վարդան Քհնյ. Աս-
 լանեան(*) Տաճարի թիւ 14ին մէջ յայտարա-
 րելով թէ «որպէս զի գումարուելիք վերա-
 նորոգիչ ժողովը Հայաստանեայց Առաքե-
 լական Ս. Եկեղեցիի ոգւոյն համաձայն
 կազմուած ըլլայ՝ աշխարհական պատգա-
 մաւորներ ալ պէտք է անդամակցին անոր,

(*) Նոյն պահանջումն ըրած էր նաեւ Տ. Վար-
 դան Ծ. Վ. Գաւապետեան իր անցեալ շաբաթուան
 յօդուածով: Թերթիս Տնօրէն-Խմբագիրն ալ «Եկե-
 ղեցին եւ Սահմանադրութիւնը» խորագրով յօդ-
 ուածի մը մէջ (Տաճար թիւ 12) շեշտած էր Հա-
 յաստանեայց Եկեղեցւոյ ժողովրդային ոգին, եւ ի
 վեր հանած էր աշխարհականներու ձայնին կարե-
 ւորութիւնը, ոչ միայն ընտրութեան, այլեւ Եկե-
 ղեցւոյ դաւանաբանական խնդրոց համար գու-
 մարուած ժողովներու մէջ. Ծ. ԽՄԲ.

ինչպէս կը տեսնենք հինգերորդ դարի պատմական ժողովին մէջ, և ինչպէս որ կը տեսնենք հայրապետական ընտրութեանց համար բոլոր գումարուած ժողովներուն մէջ:»

Այո՛, մենք ալ կը ձայնակցինք Արթ. Տէր Հօր, և միայն պատմական իրողութիւն մը չեղած կ'ըլլանք, երբ ըսենք թէ Հայ եկեղեցականը ո՛չ մէկ Դարու մէջ եղած է կղերական փառք մը, քանի որ Հայ կղերը միշտ նոյնացած է իր ժողովուրդին շահերուն ու բարձրագոյն բարիքին հետ, մասնաւոր երբ քաղաքական փոթորկաբեր ամպեր եկած են միջագնէլ Հայութեան պայծառ օրերը, և կամ մոլորութիւններ մը տած են Հայ եկեղեցիի գաւառներէն ոմանց ջինջ ճակատը. վկայ՝ Վարդանանց պատերազմը և օտարամուտեան դէմ ձեռք առնուած շատ մը միջոցներ: Այո՛, Հայ եկեղեցականութիւնը ոչ մէկ ատեն ելած է մինչև անքննադատելիութեան անմատչելի պատուանդանը, ո՛չ ալ կոյր հնազանդութիւն պահանջած է: Այն որչափ ատեն որ մնացած է իր կոչումին գիտակցութեան մէջ, ո՛չ խիղճի. ո՛չ ալ միտքի վրայ տիրացած է. վկայ՝ Հայ վանքերը, որոնք իրենց դարերուն՝ լուսաւորութեան և ազատ մտածումի կեդրոնները եղած են:

Բայց հոս նպատակ չունիմ ո՛չ Հայ կղերին ջատագուրը հանդիսանալու, ո՛չ ալ Հայ եկեղեցիին ժողովրդականութեան հանրածանօթ իրողութիւնը չեղեցու, այլ թերևս ակամայ մոռցուած, կամ խնդիրին առանց մասնաւոր կարգադրութեան և ծրագրի ուսումնասիրուելէն յառաջ եկած վերոյիշեալ կարեւոր կէտը նկատողութեան յանձնել կ'ուզենք: Շատ ուրախ ենք որ Հայ կղերը իրեն պատիւ բերելու աստիճան նախանձախնդրութիւնով մը նախաձեռնարկ կ'ըլլայ այս գործին մէջ, փաստ մըն ալ տալով թէ կրնայ ժամանակին լուսամիտ ըմբռնումներուն համաձայն շարժիլ. բայց միեւնոյն ատեն յայտնի է թէ այս կենսական խնդրին համար պէտք եղած լուրջ ուսումնասիրութիւնը չէ եղած: Ո՛չ Գևր. Տ. Գրիգ. Մ. Վ. Գալէմբարեանի, և ո՛չ ալ Տ. Տ. Սուքիաս, Աբէլ, Խորէն և Յուսիկ քահանաներուն

առաջարկները ամբողջական առաջարկներ էին, և չէին ալ կրնար ըլլալ, քանի որ մէկ կամ մէկ քանի եկեղեցականներու համար շատ դժուար է այդպիսի լիակատար ծրագիր մը պատրաստել: Տաճարի վերջին թիւին մէջ ալ կարդացինք թէ Կրօն. ժողովը որոշած է չըջարեական մը ուղղել Գաւառներու Առաջնորդներուն և Կրօն. ժողովներուն, ծանուցանելով Կեդր. Կրօն. ժողովի նախաձեռնութեամբ կատարուելիք խորհրդակցութիւնները՝ Եկեղ. ծիսական բարեկարգութեանց մասին, և խնդրելով որ իրենց կարծիքները տեղեկագրեն փութով, ի նկատ առնուելու համար ի մօտոյ գումարուելիք Համագումարին մէջ: Մենք կը կարծենք թէ այս չորջարեականը պէտք էր բաւական կանոնադրել, և այդ կերպով բաւականաչափ միջոց տալ խորհրդակցութեան: Բայց ամէնէն աւելի մեր գիտնալ ուզածը սա կէտն է թէ՛ գաւառներու մէջ ալ միայն Առաջնորդները և քահանայ Հայրերէ բաղկացեալ Կրօն. ժողովները պիտի խորհրդակցին ու իրենց կարծիքներն ու առաջարկները ներկայացնեն Կեդր. Կրօն. ժողովին: Այսպիսի բո՛ւն ժողովուրդին վերաբերող խնդիրի մը մէջ յարմար և աւելի օրինաւոր չէ՛ր ըլլար ամէն գաւառի մէջ ժողովուրդին քուէով ընտրել որոշ թիւով կարող աշխարհականներ ալ, որոնք իրենց՝ այսինքն ժողովուրդին կարծիքներն ալ, առաջարկներն ալ ներկայացնէին և Առաջնորդներու և Կրօն. ժողովներու հետ գործակցէին: Չենք կարծեր որ այս մասին օրինական արգելք մը եղած ըլլայ: Արդեօք հոս Պոլսոյ մէջ գումարուելիք Համագումարին մէջ ի՞նչ պիտի ըլլայ աշխարհականներուն բաժինը, և այս նոյն հարցումը պիտի ուզէինք ընել էջմիածին գումարուելիք ժողովին համար ալ:

Կը հասկնամ ուսեալ, զարգացած, թէ՛ Հայ և թէ՛ միւս Բրիտանիայ եկեղեցիներուն անցեալն ու ներկան ուսումնասիրած կղերականներուն օգտակար դերը՝ այսպիսի առաջարկներ բերելու և օգտակար ծրագիրներ պարզելու մէջ. բայց պէտք է խոստովանիլ թէ այսօր ըլլալիք բարեկարգութիւնները մեծ մասամբ զուտ դասա-

նաբանական կէտերու մէջ չեն. անոնցմէ շատեր ժողովուրդին ամենօրեայ կեանքին, ընկերական, բարոյական և նոյն իսկ ընտանեկան կեանքին շուրջը դարձող խնդիրներն են: Այս կէտերու մէջ կարող աշխարհականներուն բերելիք աշակցութիւնը անգլո-նահատելի պիտի ըլլար: Զոր օրինակ, առնենք ամուսնական օրէնքի մը պատրաստութեան խնդիրը: Արդեօք մեր ո՞ր եկեղեցականը կամ քանի մը եկեղեցականները պիտի կրնային ամէնէն նպատակայարմար ամուսնական օրէնքներ խմբագրել: Մինչդեռ ունինք կարող աշխարհական օրէնագէտներ, որոնք պիտի կրնան շատ օգտակար ծառայութիւններ մատուցանել այս կէտին մէջ: Նաեւ ծխական շատ մը խնդիրներու մէջ աշխարհականը նուա՞գ օգտակար ծառայութիւն մը պիտի մատուցանէր: Եւ քանի որ ըլլալիք բարեկարգութիւնները ժողովուրդին համար պիտի ըլլան, հետեւաբար աւելի տրամաբանական չէ՞ որ ժողովուրդը՝ իր պաշտօնական ներկայացուցիչներէն զատ՝ ունենայ նաեւ իր մասնաւորապէս ընտրուած ներկայացուցիչները: Ժողովուրդը, մասնաւորապէս անոր բանիմաց և յառաջդիմասէր մասը, այսչափ սպասումներէ ետքը հազիւ պատեհութիւնը կ'ունենայ այս բաղձալի վերանորոգումին առթած ճշմարիտ յոյսով և երջանկութիւնով համակուելու: Բնաւ պիտի չուզէինք ակոյափոյ ու աժանագին վերանորոգումով մը գոհնալ, որչափ ալ խորապէս համոզուած ըլլանք թէ ժամանակը դեռ շատ կարեւոր բարեփոխումներ պիտի մտցնէ: Հայ Եկեղեցիի կեանքին մէջ:

Ուստի, խոնարհաբար Ս. Պատրիարք Հօր ուշադրութեան յանձնելով այս կարեւոր կէտը, ժողովուրդին ձայնին խնդիրը, շատերուն ջերմ փափաքը յայտնած պիտի ըլլայինք՝ երբ ըսէինք թէ, որչափ ալ ծանրապէս զբաղած ըլլայ, Ն. Բարձր Սրբազնութիւնը, նորէն վինքը տեսնել պիտի ուզէինք խնդրին ղեկը ձեռքը առած, իր շուրջը հաւաքելով կղեր ու աշխարհական իր կարող զաւակները: Որովհետեւ դարերու հասցուցած պատեհութեան պտուղն է այս, կենսական խնդիր Հայ Եկեղեցիի ներկային ու ապագային համար:

Բերա

ԳՐ. Լ. ԳԱԼՈՒՍԵԱՆ

“ԴԺԲԱՒՏ ՀԱՆՃԱՐ”, Ի ՍԵ ՇԵՂՈՒՄԸ

Թերթիս Տնօրէն Խմբագիրը հրապարակային շնորհակալութեան պարտաւորութիւն մը ունի հանգէպ Պոլսահայ Մամուլին, մասնաւորապէս Բիւզանդիոն, Արեւելի, Ժամանակ, Ճ. Շարգիյե թերթերուն, որ այնքան համակիր տողեր նուիրած էին իր աչազուրկ հօր, անոր մահուան առթիւ: Հեռուէն թէ մօտէն հնարած ցաւակցական բազմաթիւ նոտակներուն մէջէն, որոնց մասին կը կրկնենք մեր շնորհակալիքը, շահեկան կը համարինք հրատարակել Սեբաստիայէն Գեր. Տ. Շաւարշ Վ. Ի գրութիւնը, գրական գեղեցիկ էջ մը ինքնին, ուր հակիրճ տողերու մէջ ճշգրիտ գիծերով կը պատկերացուի հանգուցեալին նկարագիրն և կատարած Դործը:—

Սեբասիա, 10 օգոստ.

Սիրելի Տէր Հայր.

Տխուր պարտականութիւնը կը ծանրանայ վրաս՝ Ձեզի հաղորդելու մահը Ձեր պատուական հօր և մեր բարեկամին՝ Պատուելի Թաղէոս Կէզլիւրեանի: Հազիւ տասնըհինգ օրեայ հիւանդութենէ մը վերջ, նա իր մահկանացուն կնքեց երէկ, Ազգ. Հիւանդանոցին մէջ, բժիշկներու և բարեկամներու խնամքին տակ: Մասնաւոր կարգադրութեամբ, յուղարկուողութիւնը այսօր կատարուեցաւ. Սեբաստիոյ ժողովուրդը և մասնաւորապէս մտաւորական դասը եկած էր իր յարգանքի վերջին հարկը մատուցանել հանգուցեալին յիշատակին:

Իր կորուստը զգալի է Սեբաստիոյ համար, որուն ամէնէն պատուաբեր զաւակներէն մէկն էր ինք: Բայց եթէ այսօր մարմնով ա՛լ վերջապէս կը լսա՞նուի մինէ, իր բարեկամները արդէն տարիներէ ի վեր վշտով դիտած էին աստիճանաբար նշողութիւնը իր մտաւոր կեանքին: Հին աշուղներու աղնուական ներկայացուցիչն էր ինք այս գաւառին մէջ. իր մտերիմներն եղան իր գրքերն ու ջուրթակը. ջուրթակը մասնաւորապէս, որ հին օրերու քաղցրութիւններն էր նուագած, հիմա կտրած թիւերով ու

փոշելից, կարծես ի՛ր իսկ պատկերն էր անխոս: Հոմերոսը, հինաւուրց ռափսոսանքն ու գուսանները կը յիշեցնէր ինք, երբ իր հագներգուի գաւազանովն առաջնորդուած, մախաղն ու ջութակը ձեռքը, կ'անցնէր այն փողոցներէն ուր եկեղեցին իր ստուերը կ'երկարէր:

Կոյր՝ գրեթէ ի ծնէ, բայց իր մէջ խաւարը աւելի լուսաւոր եղաւ քան լոյսը մինչէ շատերուն մէջ: Խորհուրդի՝ մտածման լոյսն ունեցաւ նա, ու աւելի երջանիկ քան բայ ակնով կոյրերը, խորհուրդի այդ անշէջ լոյսը փոխանցեց սերունդէ սերունդ: Սեքսատիոյ մասաւորականութիւնը պարծանքով պիտի յիշէ միշտ իր երգիչն ու ուսուցիչը: Ու այս պիտի ըլլայ անշուշտ մեծագոյն միջոցարարութիւնը բոլոր անոնց համար որոնք կը սիրեն ու կը յարգեն իր յիշատակը:

«Խորհուրդի Հոգի» ին միջոցարարութիւնը կը հայցեմ Ձեզ և ձերայնոց, սիրելի Տէր Հայր, և մաղթելով Ձեզ երկար կեանք,

Մնամ սգակից և սղօթակից
ՇԱԽԱՐՇ ՎԱՐԴԱՊԵՏ ՍԱՀԱԿԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԿԵԱՆՔԸ

ԿՐԹԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

«ՎԱՐԺԱՐԱՆԱՅ ՄԷՋ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐ
ՊԷՏՔ ԶԷ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԵՆ»

Ազգային թերթի մը մէջ կը կարդայինք նախորդ շաբթուն թէ Քաղաքական Ժողովը որոշած է հրահանգ տալ Ուսումն. Խորհրդոյ՝ որ նոր տարեշրջանի սկզբնաւորութեան առթիւ Պոլսոյ և գաւառներու բոլոր ուսուցիչներուն յանձնարարէ, որպէս զի եթէ իրենք ունենան քաղաքական կուսակցութեան ալ վերաբերին, վարժարանի սեմին ներս կուսակցական ունենան քաղաքական և գործի հետեւելու կամ այդ մտք թելադրութիւններ ընելու իրաւունք չունին:

Բացարձակապէս. հակառակ պարագային ազգ. իշխանութենէն ունենալ պաշտպանութիւն վայելելու իրաւունք չպիտի ունենան, և իրենց դիմումները չպիտի լսուին: Ատկէ վատ պիտի գրուի եղեր Ուսումն. Խորհրդոյ՝ որ յանձնարարէ վարժարանաց անուշներուն և հոգաբարձութիւններուն, որպէս զի թոյլ չտան այլեւայլ նպատակներով դպրոցական ընկերութիւններու կազմութեան: Արտօնուած են միայն թանգարանի կազմութեան և կարտ ուսանողաց նպատակով համար կազմուած միութիւններ, «միջնակարգ կան, կ'ըսուի, միութիւններ»՝ ճամբորդութիւններ կազմակերպելու, դասարանական իրաւունքներ պաշտպանելու (?) ևն. արտօնուող նպատակներով, որոնք յետոյ ուսանողական ըմբոստութիւններու կը յանգին:»

Անցեալ թիւով ալ կը հրատարակէինք Կրօն. Ժողովին որոշումը, թէ չըջարեալ կանով մը պէտք է հարցնել Թաղ. Խորհուրդներուն՝ վարժարանական նոր տարեշրջանի առթիւ, որ իրենց վարժարանին կրօնական ուսուցիչները կարգաւ են, և որոնք են:


Վարչութեան երկու Ժողովները, ուրիմ, համամիտ են մանկավարժական բացորոշ պահանջում մը հանդիսացող սակզունքին թէ վարժարանի տղաք բացարձակապէս հեռու պէտք է մնան կուսակցական գաղափարներէ ու պայքարներէ, և միւս կողմէ ստիպողական է դանդաղ կրթել ի մասնաւորի կրօնական ուսման մէջ, որ հիմն են ամենէն տեղի բարոյականին:

Ցաւալի է որ դպրոցական նախորդ տարեշրջանին, Պոլսոյ զանազան թաղերու մէջ գտնուած են կարգ մը ուսուցիչներ, որ կ'երեւայ թէ բարձր գիտնականութեան նշան մը ցոյց տալ կարծած են, հանդէպ կրօնի և Հայ եկեղեցւոյ սկեպտիկ գաղափարներ ու գրեթէ արհամարհող ճանադրութիւն մը ցուցադրելով, և միւս կողմէ կուսակցական բրօքականտի միջոցներ հանդիսանալով: Ասիկա կրօնաւէր ու չեզոք ծնողներէ, Թաղ. Խորհուրդներէ և Հոգաբարձութիւններէ ոմանց այն կարծի-

քը գոյացնել տուած է թէ կուսակցութեանց և մասնաւորապէս Դաշնակցութեան փափաքն է վարժարաններէն սկսիլ իրենց գաղափարներուն ծաւալման, ձեռք անցընելով մատաղ ուսանողութիւնը:

Մենք բացարձակապէս կը մերժենք այդպիսի կարծիք մը. կուսակցութիւնները չեն կրնար իրենց ծրագրին մէջ ունեցած ըլլալ այդպիսի տրամադրութիւն մը, մանաւանդ անհնարին կը նկատենք որ անոնք հակակրօն ուղղութիւն մը տալ ուզեն վարժարաններուն: Անոնք, մանաւանդ իրենց պետերը, գիտին թէ ամէնէն լուսաւորեալ, ազոտ երկիրներու մէջ, — Անգլիա, Ամերիկա, Գերմանիա, և նոյն իսկ Ֆրանսա, — կրօնքի ուսումը ամենամեծ տեղ մը ունի սոցոց դաստիարակութեան մէջ, և թէ ոչ միայն նախակրթարաններու, այլ նոյն իսկ երկրորդական վարժարաններու, յիսններու, ֆոյիմներու մէջ ամենախիստ կարգապահութիւն մը կը տիրէ, և բացարձակապէս արգելուած է ուսանողներուն՝ իրենց դասերէն դուրս, տարբեր խնդիրներով զբաղիլ կամ քաղաքական պայքարներու խառնուիլ: Անոնց սկզբունքն է միշտ տղան կրթել առողջ դաստիարակութեամբ մը, կրօնքը և միւս ուսումները սորվեցնել լայնամիտ, ազատ ոգիով մը, նկարագրիլ կազմիլ տղուն մէջ, թողլով որ վարժարանի սեմէն դուրս ելնելէ ետքը, անիկա գիտակցօրէն հետեւի այն ճամբուն զոր լաւագոյնը կը համարի իրեն և իր պատկանած ազգին ու երկրին համար: Հետեւապէս, մեր կարծիքն է թէ ամէնէն քաղաքակիրթ երկիրներու մէջ ընդունուած այս սկզբունքին անհամաձայն ընթացք մը, հակառակ է ու է կուսակցական կազմակերպութեան ծրագրին, և այդ տեսակ ընթացքի հետեւող հայ ուսուցիչներ՝ իրենց անձնական հակամիտութեանց է որ կը հետեւին, նախ գիտնականութեան ցուցադրութիւն մը ըրած ըլլալու, եւ յետոյ այս կամ այն կուսակցութեան ծառայութիւն մատուցանիլու սխալ մտածումով, մինչ իրապէս բոլորովին հակառակ արդիւնքը տուած ատիկա, անօգուտ վէճերու դուռ բանալով զանազան թաղերու մէջ: Կը մնայ

օգտուիլ անցեալ տարուան փորձառութեանէն, եւ վարժարանները յատկացնել միմիայն սոցոց դաստիարակութեան, եւ ուսմանց զանազան ճիւղերուն մէջ յառաջացման: Ի՞նչ լաւ բաներ որ կ'ընեն եւրոպացիներ, պատճառ չունինք չհետեւելու ատոնց՝ գիտակից խղճմտութեամբ մը:



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆՑ
ծրագրերն իրարու կը յաջորդեն: Ս. Պատրիարք Հօր Օգոստ. 12ի շրջաբերականին ի պատասխան Ադր. Պոլսոյ Կրօն. Ժողովքալ, իր նախագահ Տ. Արսէն Մ. Վ. Վեհուհիի հետ համախորհուրդ, յիշատակադիր մը ըրկած է Պատրիարքարան, որուն մէջ կը թելադրուի հապճեպ չգործել, նոր պառակտումներու տեղի չտրուելու համար, Կիլիկիոյ կաթողիկոսութենէն եւ Երուսաղէմի պատրիարքութենէն երկայացուցիչներ հրաւիրել գումարելի Համագումարին, նաեւ Հայ Եկեղեցւոյ պայծառութեան նախանձախնդիր հեղինակաւոր անձնաւորութիւններ (անշուշտ աշխարհական): Յիշատակագիրը միւս կողմէ կը թելադրէ կարգ մը բարեփոխումներ, որոնց մէջ ուշագրաւ են հետեւեալները. — Ամուսնութեանց ժամանակ խնամիրական եւ կնքհայրական չհասութիւններն իսպառ ջնջել, իսկ արեւակցական չհասութիւններն սուկի եւս մեղմացնել: — Այրի երիցուհիներու իրաւունք տալ անպայման ամուսնանալու: — Այրի քահանաներուն ամուսնութիւնն արտօնել, առանց կարգադրկ ընելու: — Եկեղեցիներու բարձրագոյն պաշտօնները միայն կուսակրօններուն առանձնաշնորհը չնկատել, այլ ամուսնացեալ կղերին ալ իրաւունք տալ՝ ըստ արժանաւորութեան մինչեւ հայրապետական աթոռ բարձրանալու: — Կուսակրօններէն փափաք յայտնողներն արտօնել ամուսնանալու, առանց կարգադրկ ընելու, միայն վեղարէ զրկելով: — Արժանաւոր քահանաներու իրաւունք տալ քարոզչութեան, իբրեւ վարդապետ՝ գաւազանի տուչութեամբ, վեղարը միայն պահելով նշան կուսակրօնութեան:

ՄԻԱՑԵԱԼ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ սակէ առաջ

ըրած մէկ դիմումին ի պատասխան, Ն. Ս. Օծութիւնն վեհ. Հայրապետը յատուկ կոնգրակով ծանուցած է թէ մտադիր է համագգային կրթական ֆօնս մը հաստատել, Ռուսիոյ եւ տրտասա մանի բարերարներու դրամով, ուրկէ օգնութիւններ պիտի ըլլան կրթական մարմիններու, իրենց աստիճանին եւ օգտակարութեան համեմատ, եւ այս կարգին մէջ նպաստ պիտի տրուի նաեւ Միացեալ Լիկերութեան:

ԿՐՕՆԱՓՈՒՈՒԹԵԱՆ խնդիրներու համար Ազգ. Վարչութեան ատենադպիր Տքդ. Սեղբոսեան էֆ. ի ծրագրին համաձայն պատրաստուած թագրերը, կարգացուեցաւ իրեն ժողովին անցեալ շաբթուան նիստին մէջ: Այդ թագրերին մէջ կ'ըսուի թէ կրօնափոխութեան դիմումներ չատ անգամ հետեւանք են սուեւանգութիւններու. հետեւաբար պէտք չէ նկատուին իբրեւ յօժարակամ դիմում. միւս կողմէ կրօնափոխներու տարիքին համար ալ կ'առարկուի թէ քանի որ վկայութեան համար 20 տարին լրացնող մը չափահաս կը համարուի, հետեւագէտ կրօնափոխութեան համար ալ նոյն պայմանը պէտք է պահուի: Վերջապէս նոյն թագրերով խնդրուած է որ կրօնափոխներու համար վաղուց ի վեր գործադրուած ձեւակերպութիւնները լիովին կատարուին:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԵՐՔՈՒՄ ՄԸ. — Բերայի Աւագերէց Տ. Ներսէս քհնյ. Նազիկեանի եւ հրաժարեալ Թաղ. Խորհրդոյ ղեւանդին ստորագրութեամբ հետեւեալ հերքումը կը կարդանք Բիւզանդիոնի անցեալ շաբթուան թիւերէն մէկուն մէջ. — «Թագական Խորհուրդս նկատի առնելով թաղիս քահանայից դասէն Տ. Տ. Սահակ քհ. Փափագեանի եւ Հմայեակ քհ. Արապտճեանի մասին եղած զրոյցները՝ ժողովրդեան մէկ դասակարգը գրգռած ըլլալուն համար, եւ այս առթիւ Աւագերէց Արժ. Տ. Ներսէս քհ. Նազիկեանի ուղղած գրութիւններն առ Ս. Պատրիարք Հայրն, իստն նիստ գումարեց քահանայից դասուն հետ, եւ ի ներկայութեան յիշեալ քահանայից ու Աւագերէց Տէր Հօր՝ այս մասին հարկ եղած քննութիւնները կատարելով եւ տրուած

բացատրութիւնները լսելով, ըստ ամենայնի վերահասու եղաւ թէ յիշեալ քահանաներն իրենց վերագրուած ո' եւ է արարքի մէջ գտնուած չեն, և թէ Աւագերէց Արժ. Հօր ուղղած երկրորդ գրութիւնն ո' եւ է որոշ քննութեան վրայ կայացած չէ եւ ոչ ալ ո' եւ է համոզիչ փաստի մը վրայ: Թաղական Խորհուրդս ցաւ յայտնելով չըջած զրոյցներու մասին եւ անոնց անհիմն ըլլալը հաստատելով, կը փութայ ըստ այնմ իր քննութեանց արդիւնքն հաղորդել Ս. Պատրիարք Հօր, միանգամայն հրատարակութեան տալով ի բուժումն գայթակղեալ մտաց:»

ՊՈՒԼԿԱՐԱՅ ԷԿԶԱՐԻՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ

Պուլկարաց Էկզարք Տ. Եոսիֆ Գշ. օր այցելեց Ս. Պատրիարք Հօր, հետն ունենալով Սինօդական Տ. Աւգսէնդ, փոխանորդը՝ Տ. Պորիս, եւ գործակատար Կէշէֆ էֆ.: Սանդուղին գլուխէն Ս. Պատրիարքը զիմաւորեց Էկզարքը, որուն հետ ողջագուրուեցաւ: Տ. Եոսիֆ՝ Դուրեան Սրբազանի յայտնեց թէ Պուլէն բացակայութեանը պատճառով է որ յապաղած է իր այցելութիւնը, Պատր. Աթոռը բարձրանալէն ի վեր, բայց աւելցուց թէ իր մասին պէտք եղած զաղափարն ստացած է, երբ տակաւին վանահայր էր Արմաշի, որովհետեւ պուլկարական սեմինարիային համար ուսումնասիրած էր Դպրեմանուց կրօն. ուսմանց ծրագիրը: Տ. Եոսիֆ յոյս յայտնեց թէ Հայ ազգին և իր Հոգեւոր Պետերուն կողմէ ցարդ վայելած համակրութիւնը պիտի մշակուի նաեւ Ս. Պատրիարք Հօր կողմէ, նոյն սիրալիր ոգւով: Ս. Պատրիարքն յարգական խօսքերով պատասխանեց: Ի վերջոյ խօսք դարձաւ յոյն և պուլկար Եկեղեցիներուն միջև յուզուած խնդրոյն վրայ, որուն հիմնական կարգադրութեան բաղձանք յայտնեց Ս. Պատրիարքը: Էկզարք Տ. Եոսիֆ բացատրութիւններ տուաւ: Յետոյ տեղեկութիւններ հարցուց իր բացակայութեան միջոցին կրթական խնդրոյն մասին եղած ձեռնարկներու վրայ:

Ս. Պատրիարքն ըսաւ թէ տէրութեան վերին հակողութիւնը մերժելու կողմը չէ ոչ մէկ ազդ, սակայն կ'ուզեն նաեւ պահել իրենց առանձնաշնորհումները, որոնց հիման վրայ՝ վարչութիւնը պիտի մնայ ազգին ձեռքը: Էկզարքն ըսաւ թէ պէտք է Հոգեւոր Պետերու պահանջումները միանան միեւնոյն կէտի վրայ, և ձեռնարկներն ըլլան միեւնոյն ձեռով: Ս. Պատրիարքը պատասխանեց թէ առանց նախապէս միացած գործելու, արդիւնքը նոյնն եղած է արդէն: Երկու Հոգեւոր Պետերուն տեսակցութիւնը, որ բոլորովին մտերմական էր հեռու քաղաքական ու է հանգամանքէ, տեսեց իր կէս ժամ: Ս. Պատրիարքն ի մօտոյ պիտի այցելէ Էկզարքին, և պիտի խօսի ազգին համար յոյժ կարեւոր խնդիրներու մասին, ինչպէս են՝ Պուլկարիոյ վարժարանաց խնդիրը, հայ եկեղեցւոյ «Գրիգորեան» յորջորջումը, Պուլկարիոյ առաջնորդութիւնը, որոնց վրայ ու է տկնարկութիւն չեղաւ Գշ. օրը:

ԿՐՕՆ. ԺՈՂՈՎՈՅ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Աղբ. Պոլսոյ Առաջնորդն ու Կրօն. Ժողովը, ինչպէս նաեւ Ռոտտուդոյի Առաջն. Փախանորդը ու Կրօն. Ժողովը եկեղեցական ծիսական բարեկարգութեանց մասին առաջարկներ ներկայացուցած ըլլալով, Կրօն. Ժողովը որոշեց յառաջիկայ Համագումարին նկատառման յանձնել:—Կեդր. վարժարանի Տնօրէնը առաջարկած ըլլալով կարող եկեղեցական մը անուանել վարժարանին իր կրօնի ուսուցիչ, Ժողովը որոշեց Տ. Գնէլ Մ. Վ. Գալէմբեարեանը այդ պաշտօնին կոչել:—Ժողովը Մայր եկեղեցւոյ Տ. Տ. Պօղոս և Գէորգ քահանաներու միջև ծագած խնդիրը ուշադրութեան առնելով, որոշեց զրել Աւագերէցին որ եթէ ապագային ու է անպատեհութիւն ծագի, պատասխանատուն խստիւ պիտի պատժուի:

* Կրօն. Ժողովոյ երէկոան նիստին մէջ անդամներէն Տ. Սուքրիաս քհ. Պաղգճեան յայտնեց թէ Հայ եկեղեցին ժողովրդապետական ըլլալով, պէտք է եկեղեցական բարեկարգութեան ատեն ժողո-

վորդին կարծիքն ալ առնուի: Ս. Պատրիարքն համամիտ գտնուելով՝ առաջարկեց որ ծրագրերը քննելու և դատաւորելու համար կազմուելիք Յանձնաժողովին մասնակցին ժողովրդեան կողմէ ընտրուած երկու պատգամաւորներ: Յանձնաժողովի ընտրութիւնը յետաձգուեցաւ յառաջիկային, նկատելով որ դեռ շատ գաւառներէ չեն հասած ապաստած առաջարկները, ի մասին եկեղեց. բարեկարգութեանց:

ԽԱՌՆ ԺՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Խարբերդի Առաջն. Տեղապահ Տ. Գէորգ Մ. Վ. Արսլանեան հրաժարական մատուցած էր: Խառն ժողովը Գշ. ի նիստին մէջ ինկատ առնելով Առաջն. ընտրութեան առթիւ անոր դէմ ուղղուած զանազան գիրերը, Տ. Գէորգ Մ. Վ. ի բացարձակ հրաժարման առջեւ ստիպուեցաւ ցաւօք ընդունիլ այդ հրաժարականը, և գոհուեալութիւն յայտնելով ցարդ մատուցած բարեւոք ծառայութեանցը համար, կոչեց զինքը Բաղէշի Առաջն. Տեղապահութեան, ուր ձեռնհաս եկեղեցականի մը ներկայութիւնն անհրաժեշտ է: Իսկ Խարբերդի Առաջն. ընտրութեան առկա ձգեց, և որոշեց նոր ընտրութեան հրահանգ տալ Խարբերդ:—Եւգոկիոյ եւ թեմերու ազգայիններ բազմաստորագիր հանրագրով կը խնդրէին իբրեւ Առաջնորդ Եւգոկիոյ վերադարձնել Տ. Արտաւազդ Մ. Վ. Գալէմբեարեանը: Ժողովը որոշեց Առաջն. ընտրութեան հրահանգ տալ, և ընտրելուց ետեւումն ցանկին մէջ դրաւ Տ. Արտաւազդ Մ. Վ. ի անունն ալ:—Չարսանձագի Գաւառ. Ժողովին կողմէ հեռագրով եղած խնդրանքի մը վրայ, որոշեց Եպիսկոպոսական ընծայագիր տալ Վիճակին նորընտիր Առաջնորդ Տ. Եղեկիէլ Մ. Վ. ի, նկատելով որ ասկէ առաջ ալ այդ աստիճանին արժանի դատուած էր արդէն:

ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Գահիրէ Տեարք Տ. Ստեփանեան եղբարք մէկ տարեկան Տաճար նուիրած են իրենց ծննդավայր Աշոտի գիւղի (Տարէնտէ) Աղգ. վարժարանին:

ԱՐՏՕՆԱՏԷՐ

ՀԱՐԱՅԵԱՆ ԳՇՆՅ. ԷՔՍԷՐՃԵԱՆ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ
ՀԱՐԱՅԵԱՆ ԳՇՆՅ. ԿԷԶԻՐԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Օ. ԱՐՁՈՒՄԱՆ
Հախմախքաւ, Յակոբեան խան

THE
JOURNAL
OF
THE
ROYAL
ANTHROPOLOGICAL
INSTITUTE
OF GREAT
BRITAIN
AND
IRELAND
VOLUME
XV
PART
I
1885

1885


CONTENTS
PAGES
THE
JOURNAL
OF
THE
ROYAL
ANTHROPOLOGICAL
INSTITUTE
OF GREAT
BRITAIN
AND
IRELAND
VOLUME
XV
PART
I
1885

THE
JOURNAL
OF
THE
ROYAL
ANTHROPOLOGICAL
INSTITUTE
OF GREAT
BRITAIN
AND
IRELAND
VOLUME
XV
PART
I
1885

THE
JOURNAL
OF
THE
ROYAL
ANTHROPOLOGICAL
INSTITUTE
OF GREAT
BRITAIN
AND
IRELAND
VOLUME
XV
PART
I
1885

THE
JOURNAL
OF
THE
ROYAL
ANTHROPOLOGICAL
INSTITUTE
OF GREAT
BRITAIN
AND
IRELAND
VOLUME
XV
PART
I
1885

THE
JOURNAL
OF
THE
ROYAL
ANTHROPOLOGICAL
INSTITUTE
OF GREAT
BRITAIN
AND
IRELAND
VOLUME
XV
PART
I
1885



ՍՏԱՑՈՒԱԾ ԳԻՐՔԵՐ

ՃԱՇԱԿ ԱՐԴԻ ՀԱՅ ՄԱՏԵՆԱԳՐՈՒ-
թԵԱՆ, ծաղկախաղ աշխարհաբար լեզուէ,
բազմաթիւ գրական կենսագրութիւններով
և ծանօթութիւններով: Աշխատասիրու-
թիւն Ա. Պիպեռնեանի: Դ. Տպագրութիւն:
Խնամուած պարունակութեամբ, ուռ-
ահայ և թրքահայ նշանաւոր գրողներու
գործերէն քաղուած, և կենսագրական ըն-
դարձակ ծանօթութիւններով ճոխացած է:
Պիտի բաղկանայ երկու ստուար հատոր-
ներէ: Հրատարակուած է Ա. հատորը՝ 450
երեսէ բաղկացած: Գին՝ քարդօն կազմ և
թղթակազմ՝ 10 դրուշ, լաթակազմ 12½,
փառակազմ 15, ամենաշքեղ կազմ (նուէրի
համար) 20 դրուշ: Կեդրոնատեղի Ա. Պի-
պեռնեան գրատուն, Պապը Ալի ճատտէսի,
թիւ 12: 3—3

ՀՄԱՅՅԱԿ ՔԱՀԱՆԱՅ ԷՔՍԷՐՃԵԱՆ
ՏԱՐԵՐՔ ԱՇԽԱՐՀԻԿ ԼԵԶՈՒԻ
Ա. Բ. Գ. հատոր

30 գեղջ
Կեդրոնատեղի՝ Սիւմպիւլիւ խան Փափազ-
եան գրատուն:

ԴՊՐՈՑԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՅ ՎԱՐԺԱՐԱՆ
ԳԻՇԵՐՈՅԻԿ ԵՒ ՑԵՐԵԿԵԱՅ
ԳՈՒՄ-ԳԱՌՈՒ

Վարժարանիս ուսումնական տարեշրջ-
նանք կը սկսի Սեպտ. 1 Դշ. օր. աշակեր-
տաց արձանագրութիւնք պիտի կատարուին
Օգոստ. 12էն սկսեալ ամէն Բշ. և Ուր. օրեր,
առաւօտէն մինչև ժամը 9 (Ը. Թ.):
Այս տարի վարժարանին ընդհանուր
դաստիարակութեան պաշտօնը և Ֆրանս.
բրաթիքի ճիւղը յանձնուած է Տիկ. Սա-
րուխանի. ուսուցչական մարմնոյ մէջ ալ
կարեւոր փոփոխութիւնք տեղի ունեցած
են, նաև Կրթական Յանձնախումբ մը
կազմուած է որ Գործ. Ժողովիս պիտի ա-

ջակցի վարժարանի վարչական գործերուն
մէջ: Սոյն յանձնախումբին անդամներն են.
Տեարք Գալուստ Մալաթեան, Գարեգին
Գալաֆեան, Միհրան Յովհաննէսեան,
Յովհաննէս Հինգլեան և ընդհանուր դաս-
տիարակուհին:

Գիշերօթիկներուն տարեթոշակն է 20
ոսկի Օսմանեան, իսկ ցերեկեաններունը՝
ամսական 30—40 դրշ. մուտք 20 դրշ.:

Մանրամասնութեանց, ինչպէս նաև
աշակերտաց արձանագրութեան համար դի-
մել վարժարան՝ ընդհանուր դաստիարակու-
հին, որոշեալ օրերուն մէջ:

Ձրիավարժ գիշերօթիկներուն թիւը լը-
րացած ըլլալով՝ ու է դիմում անհետե-
ւանք պիտի մնայ, իսկ որոշ թուով ցե-
րեկեայ նոր ձրիավարժներ պիտի ընդուն-
ուին մրցման քննութեամբ: 2—2

Կ Ա Ր Ե Ի Ո Ր

Բաժանորդներէն անոնց որ դեռ չեն
դրկած իրենց բաժնեգինը, վերստին կը
յանձնարարենք փութացնել իրենց հաշիւին
կարգադրութիւնը. հակառակ պարագային
քերթիս առաջունը չի կրնար շարունակուիլ:
Նոյնը առաւել եւս կը յանձնարարենք
Պատ. գործակալներուն: Տարին լմննալու
վրայ է: Դրամի առաքման լաւագոյն մի-
ջոցն է մանսա-քօսդը, ամէնէն պզտիկ գու-
մարէն սկսեալ մինչև մեծագոյն գումար-
ները: Թղթատարական փուլ զրկողները
պէտք է 40 դրշ. փուլ զրկեն (և ոչ թէ
38 դրշ. փ), և առաւելապէս երկու փարա-
նոց, որովհետեւ 20 կամ 40 փր. նոց փու-
լի այնքան պէտք չունինք, և այստեղի
նամակատունները չեն փոխեր: Փոխանա-
կագրով կամ Պոլիս այս կամ այն տեղէն
զանձելու յանձնարարութիւնք դժուարու-
թեանց կամ յապաղումներու տեղի կու-
տան:

